ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ և ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Արագածոտնի մարզ

Ոսկեթասի միջնակարգ դպրոց

Թեմա՝ Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

ՀԱԵՊ ուսուցչուհի՝ Անի Մկրտչյան

ԹԱԼԻՆ 2022

Բովանդակություն

Ներածություն---------- 3

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը---------- 4

Եզրակացություն---------- 19

Օգտագործված գրականության ցանկ---------- 20

Ներածություն

Թեմայի կարևորությունը: Դաստիարակությունը բոլոր սուրբ գործերից ամենասուրբն է: Եթե ծնողներն ու մանկավարժները երեխաների դաստիարակության և կրթության հարցում ցանկանում են լավագույն արդյունքի հասնել միայն աշխարհիկ կրթությամբ, ապա արդյունքն անխուսափելիորեն նրանց կհուսահատեցնի: Նման դաստիարակության պարագայում ինքնանպատակ է դառնում գիտելիքների ամբարումը, եթե չի զուգահեռվում հոգու ամրապնդման հետ: Այդ դեպքում երեխայի մոտ առաջ է գալիս ինքնահավանություն, փառասիրություն, հոգևոր խլություն, նախանձ և հոգու համար այլ կործանարար մոլություններ: Ամեն գիտություն պետք է դասավանդվի քրիստոնեական տեսանկյունից և միայն այդպիսի դասավանդումը գիտելիքը կդարձնի ամբողջական և ճշմարիտ: Կրթությունն, ըստ Ս. Իոանն Կրոնշտադտացու, անբաժանելի է դաստիարակությունից: Դաստիարկությունը նրա կողմից ընդունվում է՝ որպես սրտի դաստիարակություն: Նա գտնում է, որ անհրաժեշտ է նախ ուսանել սրտի գիտությունը, այսինքն՝ սիրո, հավատի, աղոթքի և խոնարհության գիտությունը: Նա նշում է, որ կրթելիս չափազանց վտանգավոր է զարգացնել միայն բանականությունն ու միտքը՝ ուշադրություն չդարձնելով սրտին. «Հարկավոր է մաքուր պահել այս կյանքի աղբյուրը: Հասարակությունը բարոյազրկվել է քրիստոնեական դաստիարակության պակասից: Ժամանակն է գիտակցել, որ մեր սրտի ճշմարիտ կյանքը Քրիստոսն է: Քրիստոնեական ամուր հիմքերից զուրկ հոգին կարող է ավերիչ հետևանքներ ունենալ: Հնարավոր է լինել գիտնական, բայց ավաղ ոչ պիտանի մարդ: Մենք պետք է կրթենք ոչ միայն հասարակության համար պիտանի և գիտնական անձանց, այլ բարի և Աստծո երկյուղն ունեցող քրիստոնյաների, ինչն առավել կարևոր է»:

Թեմայի նպատակը:

Երեխաները ամենաանկաշառ հոգևոր աչքերն ու արդարամիտ հոգին ունեն, նրանք դեռևս չեն աղտոտվել աշխարհի կանոններով: Եվ շատ անգամ մեզանից պահանջվում է երեխաներին օրինակ լինելուց առաջ, իրենց որպես օրինակ ունենալ մեզ համար, ինչպես և Քրիստոս է մեզ պատգամում, ասելով՝ եթե ուզում եք երկնքի արքայությունը մտնել, նմանվեցե՛ք այս փոքրիկներին:

Աստվածաշնչյան առակների դաստիարակչական նշանակությունը

Հանրահայտ է, որ կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքների պահպանմանն ու նոր սերունդներին փոխանցմանը: Հայաստանի Հանրապետության մտավոր ներուժի սաղմերն այսօրվա երեխաներն են՝ վաղվա պետության կերտողները:

Այս տեսանկյունից հայ ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերը, որոնք հարազատ են հայ ազգային հոգեբանությանը, առավել արդյունավետ կերպով կարող են ներգործել կրտսեր դպրոցականների հուզաշխարհի վրա: Այս առումով հայ մանկական գրականության մեջ առանձնահատուկ դեր ունեն հեքիաթները, ինչպես նաև առակները, որոնց միջոցով երեխաների մեջ դաստիարակվել են հայրենասիրություն, ազնվություն, աշխատասիրություն, ինչպես նաև ծուլությունը, չարությունը, շահամոլությունը և վախկոտությունը խարազանելու պատրաստակամություն:

Ուսուցողական և դաստիարակչական տեսակետից առակների կրթական արժեքն այսօր էլ բարձր է գնահատվում: Հենց դա է պատճառը, որ տարրական դպրոցում մեծ տեղ է հատկացվում առակներին: Անընդհատ մշակվել և մշակվում են առակները երեխաներին մատուցելու նոր մեթոդներ ու մեթոդական հնարներ, որոնց հիմնական խնդիրը առակի հումորն ու այլաբանական միտքը երեխաների գիտակցությանը հասցնելն է:

Առակի ուսուցումն առանձնահատուկ տեղ ու դեր ունի ՀԱԵՊ դասընթացում, քանզի անգնահատելի է առակի թե՛ ուսուցողական և թե՛ դաստիարակչական նշանակությունը: Առակներն այլաբանորեն, ոչ ուղղակի կերպով աշակերտ ընթերցողներին բարոյական խրատ են ուղղում՝ դաստիարակելով խոհեմություն, ազնվություն և արդարություն, աշխատասիրություն, համեստություն, սակավապետություն:

Հոգևոր դաստիարակությունը մանկական տարիքում շատ կարևոր է արժեքային համակարգի ձևավորման համար, մշակութային ժառանգությունը փոխանցելու համար: Սակայն այս կարևորությունը գիտակցելով հոգևոր ժառանգությունը փոխանցելու համար, երեխային քրիստոնյա մեծացնելու համար պետք է իմանալ

երեխայի զարգացման առանձնահատկությունների մասին, հաշվի առնել առաջին հերթին նրա.

- մտածողության,
- երևակայության,
- բարոյական ընկալումների զարգացման առանձնահատկությունները:

Հոգևոր դաստիարակությունը փոխանցում է մեծապես բարոյական արժեքներ և իրականում դրա նպատակն է բարոյական արժեքների սերմանումն ու յուրացումը: Սակայն կարևոր է մեծահասակի սեփական նպատակը այդ ընթացքում: Երբեմն մենք երեխային փորձում ենք վախեցնել կամ նրա վարքի վրա ազդել Աստծո գաղափարով, կամ Աստծո պատիժներով:

Դրանք իրականում կապ չունեն հոգևոր դաստիարակության հետ, քանի որ երեխայի վրա վախի միջոցով ազդելու ձևեր են, այնպես ինչպես վախեցնում են «Մեշոկ Պապի»-ով, կամ ոստիկանով:

Նմանատիպ օրինակ է նաև, երբ ծնողները երեխային ասում են, որ Աստված քեզ տեսնում է միշտ և ամենուր, ու եթե դու քիթիկդ փորես նա քեզ կպատժի: Նախ սա նույն օրինակն է ինչ նախորդը, այնպես ինչպես երեխային ասում են Ձմեռ պապիկի մասին, որը նվեր չի բերի եթե քեզ չար պահես: Այս օրինակները որևէ կապ չունեն հոգևոր դաստիարակության հետ, մշակութային արժեք չեն պարունակում և երեխային ոչինչ չեն սովորեցնում, հակառակը անգամ խեղաթյուրում են հոգևոր արժեքները: Երեխայի երևակայության առանձնահատկությունները երբեմն կարող են նրան տանել շատ ավելի խորը քան մենք սպասում ենք: Երեխայի մոտ կարող են վախեր առաջանալ, ամենուր իրեն հսկող, կամ տեսնող այդ աչքի հանդեպ: Բարոյական ծանր բեռ կարող են դառնալ երեխայի համար մեծահասակների շատ արտահայտություններ, որոնք մեծահասկաների ընկալումներն են ավելի շատ, քան իսկապես հոգևոր արժեք են: Երեծաների արարքների մեծ մասը մանկական չարաճճիություն են, և Աստծահաճ են: Մենք երեխաներին հրամցնում ենք այն ընկալումները, որոնք մենք ունենք կրոնի, Աստծո և նրա պատժի մասին:

Երեխաներն ավելի լավ ընկալում են մեր վարքն ու պահվածքը, քան մեր հրահանգներն ու խրատները: Այդ պատճառով այս տարիքում հոգևոր դաստիարակությունը պետք է իրականացվի ոչ առանձին և ոչ հատուկ պլանավորված:

Եթե տանը լինի մանկական Աստվածաշունչ, նկարազարդումներով և երեխայի համար հասանելի, ապա այն հաստատ հետաքրքրություն կառաջացնի երեխայի մոտ:

Ի վերջո պետք է հիշել, որ ավելի լավ է մտածել սեփական հոգևոր արժեքների մասին, մեր հոգևոր կյանքի մասին, նախքան երեխաների մեջ այդ արժեքները սերմանելու: Երեխաները կրկնօրինակում են մեր վարքը, և եթե մենք ապրում ենք բարոյական և քրիստոնեական արժեքների ներքո, ապա մեր երեխան կմեծանա որպես դրանց կրող մարդ:

Ի վերջո հոգևոր դաստիարակությունը և հավատքը պետք չէ օգտագործել որպես վախի և դաստիարակության միջոց: Հոգևոր դաստիարակությունը ոչ թե մեզ սահմանափակելու և վախեցնելու համար է, այլ մեզ հույս, ուժ, բարություն, ձգտում և կյանքի իմաստավորում և արժևորում փոխանցող միջոց է:

ԻՆՉ ԽՈՍՔ, երեխայի դաստիարակությունը հեշտ բան չէ: Սակայն, եթե ծնողը չի խրատում իր երեխային, երբ դրա կարիքը կա, նրա գործն ավելի է բարդանում: Ինչո՞ւ: Քանի որ առանց խրատի 1) երեխաները չեն սովորում լինել կարգապահ ու հնազանդ, ինչն էլ նյարդայնացնում և ուժասպառ է անում ծնողներին, և 2) երեխաները ստանում են անհետևողական դաստիարակություն, ինչն էլ շփոթության մեջ է գցում նրանց:

Մյուս կողմից, սակայն, սիրով ու ողջամտությամբ տրված դաստիարակությունը կարող է շտկել երեխայի մտածելակերպն ու վարքը: Արդյունքում երեխաներն իրենց ապահով կզգան և կդառնան պատասխանատու անձնավորություն: Բայց որտե՞ղ կարող եք վստահելի առաջնորդություն գտնել ձեր երեխաներին լավ դաստիարակություն տալու համար:

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ Է: *«Հիմարությունը կապված է երեխայի սրտին» (Առակներ 22:15):*

Թեև երեխաները կարող են լինել հասկացող ու բարի, սակայն նրանք հակված են անմտածված ու անխոհեմ արարքներ գործելու: Այդ պատճառով երեխաները խրատի կարիք ունեն *(Առակներ 13:24): Այդ փաստը հասկանալը կօգնի ծնողին պատասխանատվությամբ կատարելու իր դերը:*

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ Է: *«Երեխայից խրատը հետ մի՛ պահիր» (Առակներ 23:13):*

Պետք չէ մտածել, թե հավասարակշռված դաստիարակությունը կվնասի ձեր երեխային, կամ թե նա հետագայում բացասաբար կտրամադրվի ձեր հանդեպ: Եթե երեխային խրատեք սեր ու ջերմություն դրսևորելով, նա կսովորի հեշտությամբ ընդունել խրատը. մի բան, ինչը նրան անհրաժեշտ կլինի նաև չափահաս տարիքում (Եբրայեցիներ 12:11):

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉՆ ԱՍՈՒՄ Է: *«Մարդ ինչ որ ցանի, այն էլ կհնձի» (Գաղատացիներ 6:7):*

Բնական է, որ ծնողները ցանկանում են պաշտպանել իրենց երեխաներին, և դրա մեջ ոչ մի սխալ բան չկա: Սակայն այս դեպքում նույնպես անհրաժեշտ է հավասարակշռություն դրսևորել: Իրականում, դուք ձեր երեխային օգնած չեք լինի, եթե ամեն անգամ նրան «փրկեք» իր գործած սխալ արարքների հետևանքներից կամ եթե փորձեք պաշտպանել երեխային, երբ ուսուցիչը կամ մեկ այլ անհատ ասում է, որ ձեր երեխան որևէ սխալ բան է արել: Այդ մարդկանց հանդեպ թշնամաբար տրամադրվելու փոխարեն՝ նրանց համարեք ձեր համագործակիցները: Այդպես վարվելով՝ կօգնեք երեխային հարգելու իշխանություն ունեցողներին, այդ թվում նաև ձեզ *(Կողոսացիներ 3:20):*

Աշխարհում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական ու մշակութային փոփոխություններն ամենաանմիջական կերպով ազդում են մարդկային կյանքի տարբեր ոլորտների վրա: Ազգային դիմագիծը պահպանելու համար հարկավոր է զգուշորեն մոտենալ հոգևոր ու մշակութային ավանդույթներին, որոնց միջոցով հնարավոր է հասարակության մեջ կայունություն պահպանել և հաջող կերպով դիմակայել ժամանակակից մարտահրավերներին: Հասարակությունների առջև ծառացած խնդիրներին խելացի լուծումներ են տվել Եկեղեցու հայրերը: Ըստ նրանց՝ կարևորագույն խնդիր է մարդու մեջ աստվածնմանության պատկերի վերականգնումը, ըստ այդմ էլ՝ կրթության վերջնական նպատակը պետք է լինի Աստծո հետ միավորումը և մարդու աստվածացումը: Մեղսագործության ամենավտանգավոր հետևանքներից մեկն այն է, որ մարդու մեջ խաթարվեց աստվածային պատկերը և մարդու մեջ սկսվեց կատարվել այն, ինչի մասին Պողոս առաքյալն ասել է. «Բարին կամենում եմ անել, չեմ անում, այլ անում եմ չարը, որ չեմ կամենում անել» (Հռոմ. 7:19): Մարդը ծնվում է հավիտենության համար և որին հասնում է աստվածային ողորմածությամբ՝ հոգևոր

կատարելագործման և աստվածճանաչողության ձգտման ուղին անցնելով: Այս ամենի մեջ է կայանում երկրային կյանքի իմաստը, այնինչ հաճախ մարդն իր ողջ կյանքը գործածում է միայն երկրայինն ըմբռնելու համար:

Տիեզերական Եկեղեցու խոշորագույն վարդապետներից մեկը՝ Ս. Կյուրեղ Ալեքսանդրացին, մանկավարժությամբ զբաղվողներին ասում է՝ եկեք առավել միանանք Եկեղեցու սուրբ մարմնին, վազենք դեպի նա, ինչպես փոքրիկ երեխան է վազում դեպի բարի մայրիկը. «Դառնալով Խոսքի ունկնդիրը՝ փառավորենք մեր փրկության տունը Կառուցողին, մեզ երանելի Դարձնողին, քանի որ երկրի վրա կրթության և դաստիարակության միջոցով է մարդը դառնում երկնքի քաղաքացի: Հոգևորականը, Տիրոջ խոսքի համաձայն, ստանձնում է նաև երեխաներին քրիստոնեաբար դաստիարակելու սուրբ պարտականությունը. «Գնացե՛ք, ուրեմն, և բոլոր ժողովուրդներին Իմ աշակերտները դարձրեք: ….սովորեցրե՛ք նրանց այն բոլորը պատվիրանները, որ տվեցի ձեզ» (Մատթ. 28:19)»:

Քրիստոնեության սկզբնավորման առաջին իսկ տարիներից Եկեղեցու հայրերն իրենց գրվածքներում առանձնահատուկ ուշադրություն են դարձրել երեխաների կրթությանն ու դաստիարակությանը: Նրանք դաստիարակությանը նայում էին հավիտենության տեսակետից և ծնողներին հորդորում էին իրենց զավակներին փոքրուց Աստծո երկյուղով մեծացնել: Եկեղեցու վաղքրիստոնեական շրջանի հայրերը նախատում էին այն ծնողներին, որոնք անփույթ էին երեխայի քրիստոնեական դաստիարակության հանդեպ: Նրանցից մեկը հորդորում էր և ասում. «Դո՛ւ, սիրելով քո երեխային, չխրատեցիր նրան, այլ թույլ տվեցիր, որ նա երես առնի: Այդ պատճառով Աստծո բարկությունը քեզ վրա բերեցիր: Մի՛ տարուբերվիր, այլ բարեհոգաբար ամրացրու քո ընտանիքը: Ինչպես դարբինը մուրճով աշխատելիս աստիճանաբար հասնում է ցանկալի արդյունքին, այդպես և արդար խոսքը՝ ամեն օր ասված, կհաղթահարի ամեն տեսակի չարիք: Այդ պատճառով մի՛ դադարիր խրատել քո զավակներին»:

Հայրաբանական լույսի ներքո մանկավարժական արվեստը դեպի Քրիստոս է ուղղված: Քրիստոնեական դաստիարակությունն ուսուցանում և կրթում է հավատավոր հոգիներ, ինչը նախ և առաջ մարդուն տալիս է ներքին անհրաժեշտ հիմքը փրկության հասնելու համար, հիմք, որ դաստիարակության միջոցով օգնում է

հաղթահարել կրքերը և ձեռք բերել բարի սովորույթներ: Ս. Կյուրեղ Ալեքսանդրիացին հարց է տալիս և պատասխանում՝ ի՞նչ է խոստանում սովորեցնել մեծ Ուսուցիչը. Նա ազատագրում է մարդուն աշխարհիկ սովորությունների գերությունից, որով մարդիկ բավարարվել են և կրթում է միակ ու հնարավոր փրկության համար: Նա մատնանշում է, որ գործնականը և ոչ տեսականը պետք է լինի մանկավարժական գործունեության դաշտը և ինչը պետք է նպաստի երեխայի բարոյական կյանքի զարգացմանը:

Երեխայի կրթությունն ու դաստիարակությունը մեծագույն աշխատանք է, արվեստների մեջ ամենադժվարինը: «Ո՞ր արվեստը կարող է համեմատվել պատանու հոգու կրթության և մտքի լուսավորման արվեստի հետ: Այս արվեստին գիտակ անձը յուրաքանչյուր նկարչից և քանդակագործից առավել ուշադիր պետք է լինի, բայց այս ամենին շատ քչերն են անդրադառնում: Հոգ մի՛ տար, որ որդիդ հայտնի դառնա արտաքին գիտելիքներով և փառք ձեռք բերի, այլ ջա՛նք թափիր, որպեսզի նա փառքի գերին չդառնա և առավել փառքի կարժանանա: Այս մասին նա չի սովորելու աշխարհիկ ուսուցիչներից, այլ Սուրբ Գրքից: Երեխային բարի պահվածք է անհրաժեշտ և ոչ սրամտություն, բարոյականություն և ոչ թե խոսքի զորություն, գործեր և ոչ թե խոսքեր, այս ամենն են Արքայություն և իրական բարիք պարգևում»,- ասել է Ս. Հովհան Ոսկեբերանը:

Հայրաբանությունը շեշտում է, որ երեխայի դաստիարակությամբ և կրթությամբ պետք է զբաղվել դեռ վաղ տարիքից, ինչպես փոքր ծառը որ ուղղությամբ թեքված լինի, այդպես էլ մինչև վերջ կաճի, այդպես էլ երեխան, ինչին, որ սովորեցնեն, դրան էլ կհակվի մինչև կյանքի վերջը: Երեխան կարող է դառնալ հրեշտակ կամ դև, ինչպիսի դաստիարկություն և խրատ ստանա, այդպիսին կլինի: Նախ և առաջ երեխայի միտքն անհրաժեշտ է զբաղեցնել աստվածաշնչյան պատմություններով և սրբերի վարքագրությամբ՝ աննկատելիորեն այնտեղ սերմանելով աստվածային երկյուղը: Եկեղեցու հայրերը ցավալիորեն նկատում են, որ մանկավարժները հիմնականում կրթում են երեխայի միտքը՝ անտեսելով հոգևոր դաստիարակությունը: Ոչ միայն դպրոցական կրթությունն է համարվում մարդու հաջողության հիմքը, այլև պարկեշտ ու բարեպաշտ վարքը՝ աստվածային ճշմարտության և խղճի համաձայն: Մարդու կրթությունը կայանում է մտքի, կամքի, սրտի և միաժամանակ հոգու դաստիարակությամբ: Այն սկսվում է ընտանիքում, հետո տեղափոխվում դպրոց: Ռուս

դեմոկրատ-մանկավարժ, գիտական մանկավարժության հիմնադիր, «ռուս ուսուցիչների ուսուցիչ» Կ. Դ. Ուշինսկին ասել է. «Ազգային դաստիարակությունը պետք է լուսավորվի եկեղեցով, իսկ դպրոցը պետք է լինի եկեղեցու նախադուռը»:

Երեխայի քրիստոնեական դաստիարակության գործին պետք է լծվեն թե՛ Եկեղեցին, թե՛ պետությունը, թե՛ ծնողներն ու մանկավարժները: Տարբեր ժամանակաշրջաններում ապրող Եկեղեցու հայրերը հասարակության կողմից անընդհատ հնչող դժգոհությունների վերաբերյալ ասել են. «Մենք դժգոհում ենք, որ չկան ուժեղ կամքով ու հոգով մարդիկ, դժգոհում ենք, որ քիչ են մարդիկ, որոնց կարելի է վստահել, քիչ են նրանք, ովքեր հանուն մերձավորի պատրաստ են ինքնազոհաբերման կամ սխրանքի: Կլռեն այս դժգոհությունները, եթե Աստծո խոսքը գործի պատանիների սրտում: Այդ դեպքում նրանց սիրտը կլինի ամուր, իսկ հավատքը՝ զորեղ»: Ոչինչ չի կարող փոխարինել Աստծո խոսքին, որ «կենդանի է և ազդու» (Եբր. 4:12), որը շնորհվել է մարդկությանը՝ որպես հավիտենություն տանող ճանապարհի ուղենիշ: Նա, ով ցանկանում է բանալ իր սիրտը ճշմարտությունն ուսանելու համար, նա՝ որպես իրապես կրթված անձ, դեռևս երկրի վրա հաղորդակից կլինի հավիտենական երանելի կյանքին:

Սովորողի համակողմանի զարգացման հիմքը արժեքային համակարգի ձևավորումն է՝ ազգային և համամարդկային արժեքների գիտակցումը: Մանկավարժական արժեբանության կիրառական տեսանկյունից այս դրույթը արտացոլվում է հանրակրթության կրթական չափորոշիչներում, ուսումնական ծրագրերում, ուսումնական պլաններում, դասագրքերում, դիդակտիկ և մեթոդական նյութերում: Դպրոցը, հանդիսանալով անձի կրթության, դաստիարակության դարբնոցը, սերնդից սերունդ փոխանցում է հասարակության մեջ կուտակված նյութական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական, բարոյական, գեղագիտական, ճանաչողական և այլ բնույթի արժեքներ: Սովորողի հոգեմտավոր ներաշխարհը ձևավորվում է ազգային և համամարդկային արժեքների գիտակցության ներքո, իսկ այդ արժեքներն ընկած են մարդասիրական կրթության հիմքում: Սովորողի ճանաչողական աչժեքները ձևավորվում են գիտելիքի միջոցով . մտորել- գնահատել – իմաստավորել- յուրացնել ճանաչողական արժևորման տրամաբանական քայլերը սկսվում են գիտելիքի փոխանցմամբ: Հետևաբար, գիտելիքը համարվում է առաջնային

արժեք կրթական արժևորման աստիճանակարգում: Անձի կրթվածություն ասելով՝ հասկանում ենք ոչ միայն գիտելիքների համակարգի տիրապետում, այլև ստեղծագործական ունակությունների դրսևորում, համագործակցային, ինքնաարտահայտման որակների առկայություն, արժեքայի գիտակցություն:

Անձի դրական հատկանիշների գնահատումը, արժևորումը բացահայտվում է այն բարոյախոսությամբ, որ փոխանցվում է առակի միջոցով: Ի լրումն այս ամենի՝ հոգևոր, բարոյական որակների ձեռքբերման առումով էլ ավելի ուժ ունեն Հիսուսի առակները, որոնք իրական կյանքից վերցված պատմություններ են: Դրանք Հիսուսի կողմից ավանդված բարոյականության յուրահատուկ դասեր են: Բարոյական, հոգևոր արժեքների փոխանցման յուրահատուկ աղբյուր է. Հիսուս առակներով խոսում է երեխայի հոգու հետ՝բարերարության, լույսի, մարդասիրության դասեր տալով: Կրկնության դասը հնարավորություն է տալիս ուսուցչին՝ անդրադառնալու Հիսուսի առակներին և դրանց միջոցով սովորողների մոտ ձևավորելու նոր արժեքներ: Առակների ուսուցման ժամանակ հարկավոր է ուսուցչի կողմից հստակ մեկնաբանվի յուրաքանչյուր միտքը իր արտահայտած իմաստով, քանզի այն կարող է երբեմն ստանալ ոչ ճիշտ ընկալում, քանզի առակն ինքնին խոհախրատական և փիլիսոփայական միտք է իրենից ենթադրում:

Առակը բաղկացած է 2 մասից՝ սյուժեից և բարոյախոսությունից:

Սյուժեն դեպքերի, իրողությունների սեղմ շարադրանքն է, իսկ բարոյախոսությունը՝ առակի սկզբում կամ մեծ մասամբ վերջում արտահայտված եզրակացությունը: Առակի հերոսը մարդն է, ում կյանքի, բնավորության բացասական գծերը ծաղրվում են այլաբանորեն: Առակներում կենդանիներն ու բույսերը խոսում են մարդկային լեզվով, աշխատում են, օգնում կամ խանգարում միմյանց: Առակներում գովաբանվում և խրախուսվում են լավը, բարին, բարոյականությունը, ջանասիրությունը, ազնվությունը, հայրենասիրությունը, ընկերասիրությունը, գեղեցիկը, մարդկայինը և, ընդհակառակը, ծաղրվում ու դատապարտվում են վատը, չարը, տգեղն ու անմարդկայինը, դավաճանությունն ու վախկոտությունը:

Հնում «առակ» բառը նշանակել է նաև խրատ, իմաստություն: Այդպիսիք են Աստվածաշնչում պահպանված Սողոմոնի առակները, որոնք մեծ ազդեցություն են թողել գրեթե բոլոր ժողովուրդների մտածելակերպի վրա: Առակների առաջին հայտնի

հեղինակը հույն Եզոպոսն է: Առակներով հարուստ է նաև հին հնդկական գրականությունը: Արևելյան ժողովուրդների մեջ տարածված են եղել Խիկար Իմաստունի և Մոլլա Նասրեդինի առակները:

Սողոմոնը պատանի հասակում թագավոր է դառնում: Նա հետևում էր իր հոր՝ Դավթի տված իմաստուն խորհուրդներին: Աստված հավանում է նրան ու մի գիշեր երազի մեջ հարցնում է. «Սողոմո՛ն, ի՞նչ կուզեիր ինձանից ստանալ»: Ի պատասխան՝ Սողոմոնն ասում է. «Ո՛վ իմ Աստված, ես շատ երիտասարդ եմ ու երկիր կառավարել չգիտեմ: Ուստի, տո՛ւր ինձ իմաստություն, որպեսզի քո ժողովրդին ճիշտ ձևով առաջնորդեմ»: Աստծուն դուր է գալիս Սողոմոնի խնդրանքը: Հետևաբար, նա ասում է. «Քանի որ դու իմաստություն խնդրեցիր ու ոչ թե երկար կյանք կամ հարստություն, ապա դու կլինես այնքան իմաստուն, որքան աշխարհում դեռ ոչ մի մարդ չի եղել: Բայց դրա հետ մեկտեղ ես քեզ կտամ նաև այն, ինչ որ չխնդրեցիր՝ թե՛ հարստություն և թե՛ փառք»: Երբ Սողոմոնը՝ Դավթի որդին, մ.թ.ա. 1037թ.-ին դարձավ Իսրայելի թագավոր, «երեք հազար առակ գրեց»: Նրա իմաստուն խոսքերի որոշ մասն արձանագրվեց Աստվածաշնչի «Առակներ» գրքում: Այս առակներում հավիտենական ճշմարտություն է ամփոփված: Դրանք այսօր նույնպես ժամանակահարմար են:

Սողոմոնի իշխանության տարիները նպաստավոր ժամանակաշրջան էին: Այդ ժամանակ Իսրայելի թագավորությունն իր ծաղկման գագաթնակետին էր գտնվում: Այնուամենայնիվ, մարդիկ անձնական խնդիրներ ու դժվարություններ ունեին, որոնց պատճառը մարդկային անկատարությունն էր: Ուստի զարմանալի չէ, որ իր խնդիրները լուծելու համար ժողովուրդը դիմում էր իմաստուն Սողոմոն թագավորին: Բազմաթիվ հարցերի առնչությամբ վճիռներ կայացնելիս նա առակներ էր ասում, որոնք վերաբերում էին առօրյա կյանքի տարբեր ոլորտներին: Այդ կարճ, բայց դիպուկ առածները շատ բարձր էին գնահատում նրանք, ովքեր ցանկանում էին իրենց կյանքը ներդաշնակեցնել Աստծու կամքին:

Աստվածաշունչը չի ասում, թե Սողոմոնն է գրել «Առակներ» գիրքը: Այնուամենայնիվ, նշում է, որ նա «խոսեց» առակներ, նաև՝ «նա ամեն ինչ մանրակրկիտ քննում էր, որպեսզի բազում առակներ շարադրի»՝ այդպիսով ցույց տալով, որ թագավորն ուզում էր, որ դրանք պահպանվեին ապագայի համա: Դավթի և Սողոմոնի օրերում պալատական պաշտոնյաների մեջ կային նաև քարտուղարներ, ովքեր և

կառավարչի խոսքերը խոր հարգանքով էին ընդունում ու գրի առնում դրանք։ Գրքի մեծ մասը, անկասկած, գրվել է Սողոմոնի իշխանության տարիներին (մ.թ.ա. 1037–998թթ.)։ Եբրայերեն Աստվածաշնչերում «Առակներ»-ը սկզբում անվանվում էր գրքի առաջին խոսքով՝ միշլեհ, որը նշանակում է «առակներ»։ Միշլեհ բառը եբրայերեն մաշալ գոյականի հոգնակի ձևն է, որը ակներևաբար ծագում է «նման լինել» կամ «համեմատելի լինել» նշանակությունն ունեցող բառի արմատից։ Այս ձևակերպումները ճշգրտորեն բնութագրում են գրքի բովանդակությունը, քանի որ առակները սեղմ ասացվածքներ են, որոնք հաճախ նմանություններ կամ համեմատություններ են, և դրանց նպատակը ունկնդրին մտածելու տեղիք տալն է։ Սեղմ կառուցվածքը հեշտացնում է առակների ընկալումը, դրանք դարձնում է հետաքրքիր։ Բացի այդ, կարճ առակները հեշտ է սովորել ու հիշել։ Առակի հիմնական միտքը չի մոռացվում։

Աստվածաշունչ նշանակում է Աստծուց ներշնչված / Աստծու ներշնչանքով գրված/ «Սուրբ գիրք», բառի լայն իմաստով, համարվում է ցանկացած կրոնական համակարգում բացառիկ հեղինակություն վայելող և սրբություն համարվող գրությունների ամբողջությունը։ Առավել նեղ՝ քրիստոնեական իմաստով Սուրբ Գիրքը սրբազան մատյանների՝ գրքերի այն ժողովածուն է, որն եկեղեցիների կողմից ընդունվում է որպես աստվածային հայտնության արձանագրություն և իր մեջ պարունակում է Աստծո խոսքը, պատգամներն ու թելադրանքները, ինչպես նաև աղբյուր է ծառայում հավատքի, դավանական սկզբունքների, կրոնաբարոյական կյանքի ու հոգևոր սննդի համար։ «Սուրբ Գիրք» տերմինը, որ կիրառվում է քրիստոնեական բոլոր եկեղեցիների կողմից, թարգմանությունն է հունարեն βίβλος (biblos) բառի, որը թարգմանվում է գիրք, շարադրանք։ «Գիրք» կամ «գրքեր» անվանումը Սուրբ Գիրքը օգտագործում է դեռևս Հին Կտակարանում (Սաղմ. 39:8), իսկ Նոր Կտակարանում Քրիստոսը և առաքյալները Հին Կտակարանի Սուրբ Գրքերը անվանում են «գրքեր» և «գրություններ» (Մատթ. 21:42, 22:29, Ղուկ. 24:32, Հովհ.5:39)։ Հին քրիստոնյաների մոտ լայն կիրառություն ուներ «Սուրբ Գրություններ» եզրը, որն օգտագործում է նաև Պողոս առաքյալը (Հռոմ.1:2, Բ Տիմ. 3:15)։ Սկզբնական շրջանում «Սուրբ Գրություններ» անվանվում էին բոլոր տեսակի Սուրբ Գրքերը, սակայն

ժամանակի հետ այն համընդհանուր կիրառության մեջ մտավ որպես սուրբգրային տեքստերի կանոնականացված ժողովածու։

Ըստ այսմ, յուրաքանչյուր ավանդություն և յուրաքանչյուր դոգմա պետք է գտնվի Սուրբ Գրքի հետ հարաբերության մեջ։ Թեև Սուրբ Գիրքը, որպես այդպիսին, Եկեղեցում վկայված է Սրբազան Ավանդության մեջ և այդ իմաստով այն ավանդության բաղկացուցիչ է հանդիսանում, սակայն այն չի կորցնում իր բացառիկությունը և միակության արժեքը, այլ պահպանում է իր բնույթը որպես Աստծո խոսք, որը, մեկ անգամ ճանաչվելով և վկայվելով ավանդության մեջ, հանդիսանում է հավատքի և դավանանքի առաջնային աղբյուրը։

Կարելի է ասել, որ Սրբազան Ավանդությունն իր զանազան հայտնություններով ունի համեմատական-պատմական բնույթ, իսկ Սուրբ Գիրքը Աստծո ձայնն է՝ ուղղված մարդուն ու աշխարհին և նրան է պատկանում առաջնային կարևորությունն ու նշանակությունը։ Սուրբ Գիրքն աստվածային հավերժական հայտնությունն է և որպես այդպիսին, ունի անքննելի և միշտ բացահայտվող խորք ու նշանակություն ոչ միայն ներկա դարի, այլ նաև ապագայի համար։ Հատկանշական է այն, որ հայերիս մեջ Սուրբ Գիրքը առավելաբար անվանվում է Աստվածաշունչ՝ Աստծուց ներշնչված, Աստծո շնչով գրված։ Աստվածաշունչ բառը (հունարենն (theopneustos) (theos) - Աստված և πνεύμα (pneuma) – շունչ բառերից) առաջին անգամ գործածում է Պողոս առաքյալը՝ ասելով. «Աստծո շնչով գրված ամեն գիրք օգտակար է ուսուցման, հանդիմանության, ուղղելու և արդարության մեջ խրատելու համար» (Բ Տիմ. 3:16)։ Աստծո հայտնության գրավոր փոխանցումը մարգարեների և այլ հեղինակների կողմից նկատվել և ըմբռնվել է որպես հրաման հենց Իրենից՝ Աստծուց. «Ահա քեզ մի նոր մեծադիր մատյան. նրա մեջ ճարտար մարդու գրիչով գրի՛ր…» (Ես. 8:1) կամ «Պարզորոշ գրի՛ր այդ տեսիլքդ տախտակի վրա, որպեսզի ով կարդա, համարձակ կարդա» (Ամբ. 2:2)։ Սուրբ Գրքի աստվածաշնչականությունը (այսինքն Աստծո շնչով գրված լինելու հանգամանքը) ըմբռնելու համար շատ կարևոր է Պետրոս առաքյալի խոսքը. «… մարգարեությունը ոչ թե ըստ մարդկանց կամքի տրվեց, այլ Սուրբ Հոգուց մղված, որ խոսեցին Աստծո սուրբ մարդիկ» (Բ Պետ. 2:21)։ Հայտնության այս տվյալների վրա է անշուշտ հիմնված մեր եկեղեցու հանգանակի այն հատվածը, ուր ասվում է, թե Սուրբ Հոգին «խոսեցաւ յՕրէնս և ի Մարգարէս և յԱվետարանս»։ Այս ամենից կարելի է եզրակացնել, որ Սուրբ Գրքերի

աստվածաշունչ լինելը անհերքելի իրողություն է, սակայն հարց է առաջանում, թե ինչպե՛ս պետք է ըմբռնել այդ աստվածաշունչ լինելու որակը, ձևը, տարողությունը։ Համաձայն Պետրոս առաքյալի երկրորդ նամակի առաջին գլխի 21-րդ համարի՝ հստակ է դառնում, որ Սուրբ Գիրքը երկու հեղինակ ունի՝ Աստված՝ Սուրբ Գրքի խորքի հեղինակը, այսինքն դրա նախապատճառը և մարդը՝ Սուրբ Գրքի ձևի հեղինակը՝ երկրորդական պատճառը։ Ինչպես Սուրբ Գրիգոր Սքանչելագործն է ասում. «Սուրբ մարգարեների և առաքյալների լեզվով մեզ հետ խոսում է Տերը»։ Թե՛ Լատին, Թե՛ Ուղղափառ եկեղեցիները շեշտում են այն, որ Սուրբ Գիրքը Աստծո խոսքն է, իսկ Բողոքական եկեղեցին այն կարծիքին է, թե Սուրբ Գիրքն ուղղակի բովանդակում է Աստծո խոսքը։ Ի տարբերություն այս կարծիքների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին պնդում է, որ Սուրբ Գիրքը բովանդակում է Աստծո խոսքը և Աստծո խոսքն է ինքնին։ Եկեղեցին չի ընդունում այն տեսակետը, թե Սուրբ Գիրքն ուղղակիորեն բառ առ բառ թելադրվել է Աստծուց մարդուն, քանզի այդ պարագայում գրքերի հեղինակները պիտի համարվեն հասարակ գրագիրներ, որոնց դերը սահմանափակվում է գործնական աշխատանքով միայն։ Սուրբ Բարսեղ Մեծը նշում է, որ Սուրբ Հոգին երբեք չի զրկում բանականությունից նրան, ում ինքը ներշնչում է. հակառակ դեպքում նման քայլը կդիտվի սատանայական։ Մարդկային բնությունը մնում է անձեռնամխելի այն բանում, որ հատուկ է միայն իրեն՝ մարդուն, սակայն հարստացվում է Սուրբ Հոգուց։ Յուրաքանչյուր աստվածաշնչական գրքում առկա է մարդկային հանճարի կնիքը, որը հատուկ է յուրաքանչյուր հեղինակի։ Կարծես կիսելով այս կարծիքը՝ Որոգինեսը պնդում է, որ ճիշտ չէ այն մտայնությունը, թե մարգարեները խոսել են առանց գիտակցության՝ Սուրբ Հոգու ճնշման տակ, այլ խոսել են կատարյալ ազատությամբ։ Սակայն մի բան միանգամայն ակնհայտ է. ներշնչումն Աստծուց է. հեղինակի գրի առնելու ժամանակ աստվածային զորությունը միշտ ներկա է, և այն, այսպես ասած, թույլ չի տալիս, որ գաղափարները գրվեն ու ներկայացվեն սխալ ձևով։ Ընդունելով, որ Սուրբ Գիրքը աստվածաշունչ է, քրիստոնյաները համարում են այն անսխալական՝ ճշմարտության աղբյուր և հայտնության հայելի։

Աստվածաշունչը բաղկացած է Հին և Նոր կտակարաններից (Հին Կտակարանը համարվում է նաև հրեաների Սուրբ Գիրքը)։ Սուրբ Գրքի առանցքն ու կենտրոնը Փրկիչն է՝ Հիսուս Քրիստոսը։ Ըստ այսմ Աստվածաշնչյան գրքերը, որոնք գրված են

նախքան Քրիստոսի աշխարհ գալը և մարգարեանում են նրա մասին, մտան Հին Կտակարանի կազմի մեջ, իսկ նրանք, որ կազմվեցին Փրկչի աշխարհ գալուց հետո ու նվիրվեցին Նրա քարոզչական առաքելությանն ու նրա առաքյալների կողմից հիմնված Եկեղեցու սկզբունքների շարադրմանը, ընդգրկվեցին Նոր Կտակարանի մեջ: Ինչպես Ուխտ, այնպես էլ դրա հետ կապված Հին և Նոր բառերը փոխառված են Սուրբ Գրքից (օրինակ՝ Ելք 24:7, Մատթ. 16:28): Ուխտ բառը (լատ.՝ testamentum, հուն.՝ διαθήκη (diatheke)) նշանակում է կարգ, կտակ (այստեղից էլ կտակարան եզրը), համաձայնություն, երդում: Հին Կտակարան արտահայտությունը առաջին անգամ հանդիպում ենք կորնթացիներին ուղղված երկրորդ նամակում (3:14): Հինկտակարանյան գրքերի կանոնը քրիստոնեական Եկեղեցին ընդունեց հրեական Սուրբ Գրքից (Հին Կտակարանը բաժանվում է երեք մասի՝ Թորա (Օրենք կամ Հնգամատյան), Նեբիիմ (Մարգարեություն), Քեթուբիմ (Գրություններ): Ոմանք գրություններից առանձնացնումեն նաև Իմաստության գրքերը՝ գրություններ բաժնում թողնելով միայն պատմական գրքերը): Հին Ուխտը փաստորեն հանդիսանում է այն վեմը, որի վրա պիտի բարձրանար քրիստոնեական տունը: Քրիստոսը Հին Կտակարանում հանդես է գալիս որպես ակնկալիք, իսկ Նորում՝ ակնկալիքների իրականացում. այս երկուսը միասին կազմում են մեկ ամբողջություն: Մի խոսքով այն ամենն, ինչ վկայված էր Հին Կտակարանում, նախապատրաստությունն էր նորում իրականացվելիք հայտնության (Ղուկ. 24:27, 44, Հովհ. 5:39, 46), որը, կարելի է ասել, տառացիորեն, ամենայն մանրամասնությամբ իրականացավ Փրկչի շուրթերից հնչած վերջին արտահայտությամբ. «Ամեն ինչ կատարված է» (Հովհ. 19:30): Հին և Նոր Կտակարանների հարաբերությունը լավագույնս տալիս է Օգոստինոս երանելին՝ ասելով. «Նոր Կտակարանն անթեղված է Հնում, Հինը բացահայտվում է Նորում»: Նոր Կտակարանի առաջին չորս գրքերը՝ Ավետարանները, արձագանքն են Մովսեսի Հնգամատյանի և իրենցից ներկայացնում են նոր Ծննդոց, բայց միաժամանակ ընդգրկում են մարգարեության լրումը՝ Մեսիայի գալուստը մարգարեական նախավկայությամբ և վերջին օրվա դատաստանը: Երկրորդ մասը, որ պատմական գրքերն են, նույնացվում է Գործք Առաքելոցի հետ: Սրան հաջորդում են նորկտակարանյան նամակները, որոնք զուգակցվում են Հին Կտակարանի պոետիկ և խոհական (Իմաստության գրքեր) բաժնի հետ: Ի վերջո Նոր Կտակարանի և ողջ Սուրբ

Գրքի լրումը իրականանում է Հովհաննեսի Հայտնությամբ և վերջինիս երկնային քաղաքի ու ժամանակի վերջի տեսիլքով:

«Պատվիրան» բառը մեզ գուցե հիշեցնի Տասը պատվիրանները, մի ցուցակ, թե ինչ չպետք է անել, Աստված մեզ ասում է, ոչ միայն ինչ չպետք է անենք, այլև ինչ պետք է անենք: Նրա մեծագույն հույսը մեր հավերժական երջանկությունն է, այնպես որ մենք կարող ենք վստահ լինել, որ Նրա պատվիրանները սահմանափակող կանոններ չեն, այլ աստվածային առաջնորդություն, որոնք նպատակ են հետապնդում պաշտպանել մեզ վնասից և առաջնորդում են դեպի ավելի լավ կյանք:

Գերությունից դուրս բերելով Իսրայելի զավակներին Մովսեսը գնաց Սինայ Սարի գագաթը և խոսեց Աստծո հետ: Երբ Մովսեսը սարից իջավ, նա իր հետ բերեց քարե տախտակների վրա փորագրված Տաս պատվիրանները, որ Տերը հայտնել էր իրեն: Հազարավոր տարիներ անց, այսօր մենք հետևում ենք այդ պատվիրաններին:

Այն, ինչ մենք ուտում ենք և չենք ուտում հիմնական ակնհայտ ցուցիչներն են մեր հավատքի, և դա արդյունքն է մեր հավատի, որ մեր մարմինները թանկ նվեր են Աստծուց: Մենք հավատում ենք, որ Նա մեզ տվել է ուղեցույց, թե ինչպես լավագույնս հոգանք մեր մարմնի համար: 1833թ. Նա Ջոզեֆ Սմիթին հայտնեց առողջության օրենքը, որը կոչվում է Իմաստության Խոսք: Այն արգելում է ոգելից խմիչքի, սուրճի և թեյի, ծխախոտի օգտագործումը: Այն նաև ենթադրում է, որ մենք չենք օգտագործում անօրինական թմրանյութեր կամ չենք չարաշահում նշանակված դեղերը: Իմաստության Խոսքը նաև խրախուսում է ուտել շատ միրգ, բանջարեղեն և շատ հատիկեղեն, բայց չափավոր քանակի միս: Դա հիշեցնում է մեզ այդ ամենն ուտել «խելամտորեն և գոհաբանությամբ»: Բացի այս պարզորոշ ուղեցույցից, Եկեղեցին ուսուցանում է մեզ հիմնականում վարել առողջ ապրելակերպ՝ բավարար չափով քնել, կանոնավոր վարժություններ անել և խուսափել սնվելու ծայրահեղ ռեժիմից:

Հիսուսը, ժողովրդին քարոզելով, ասաց. «Զգուշացե՛ք, զգուշացե՛ք ագահությունից, որովհետև մարդու կյանքը կախված չէ իր ունեցվածքի առատությունից»: Այնուհետև նա նրանց մի առակ ասաց. «Մի հարուստ մարդ դաշտում լավ բերք ուներ և ինքն իր հետ մտածեց. «Ի՞նչ անեմ: «Ես իմ պտուղները հավաքելու տեղ չունեմ»: Նա ասաց. «Ահա թե ինչ կանեմ. կքանդեմ իմ գոմերն ու ավելի մեծերը կշինեմ, և այնտեղ կհավաքեմ իմ ամբողջ ցորենն ու ողջ ունեցվածքը, և կասեմ. իմ հոգին. իմ հոգի՛ Շատ

լավ բան է քեզ հետ երկար տարիներ. հանգստացիր, կեր, խմի, ուրախացիր: Բայց Աստված նրան ասաց. հենց այս գիշեր հոգիդ կվերցնեն քեզնից. ո՞վ պիտի ստանա այն, ինչ պատրաստեցիր»: Այդպես է նաև նրանց, ովքեր իրենց համար գանձեր են դիզում և չեն հարստանում Աստծուց: Հիսուսն այնուհետև ասում է. , քանի որ այս ամենը փնտրում են այս աշխարհի մարդիկ. բայց ձեր Հայրը գիտի, որ դրա կարիքն ունեք. Ամենից շատ փնտրեք Աստծո Արքայությունը, և այս ամենը ձեզ կավելանա: Մի՛ վախեցիր, փոքրիկ հոտ: Որովհետեւ ձեր Հայրը հաճեցաւ ձեզի տալ թագաւորութիւնը: Վաճառեք ձեր ունեցվածքը և ողորմություն տվեք: Պատրաստե՛ք ձեզ համար չքայքայվող հեշտոցներ, անմնացորդ գանձ երկնքում, որտեղ ոչ մի գող չի մոտենում, և ուր ցեցը չի ուտում. Որովհետև որտեղ ձեր գանձն է, այնտեղ կլինի նաև ձեր սիրտը»:

ՂՈՒԿԱՍ 12.15-21, 29-34

Հիսուսի այս առակը խոսում է երկու մարդկանց մասին, որոնց կյանքը շատ տարբեր էր: Մեկն ապրում էր հարուստ, բայց անարդար, մյուսն ապրում էր աղքատության մեջ, բայց արդար: «Մի մարդ հարուստ էր, ծիրանի ու բեհեզ հագած և ամեն օր խնջույք էր անում: Նաև կար մի մուրացկան՝ անունը Ղազար, որը կեղևներով պառկած էր իր դարպասի մոտ և ուզում էր կերակրել հարուստի սեղանից թափվող փշրանքներով: իսկ շները, գալով, լիզեցին նրա քոսերը: Խեղճը մեռավ և հրեշտակները տարան Աբրահամի գիրկը, հարուստն էլ մեռավ և թաղեցին, իսկ դժոխքում, տանջանքների մեջ լինելով, աչքերը բարձրացրեց, տեսավ. Աբրահամը հեռվում, իսկ Ղազարոսը իր գրկում, աղաղակելով ասաց. «Հայր Աբրահամ. ողորմիր ինձ և ուղարկիր Ղազարոսին, որ իր մատի ծայրը թաթախի ջրի մեջ և սառչի իմ լեզուն, որովհետև ես տանջվում եմ այս բոցի մեջ»: Բայց Աբրահամն ասաց. հիշիր, որ դու արդեն ստացել ես քո լավը քո կյանքում, իսկ Ղազարոսը՝ չարը. այժմ նա մխիթարվում է այստեղ, մինչդեռ դուք տառապում եք. Եվ այս ամենից բացի, մեր և ձեր միջև մեծ անդունդ է ստեղծվել, այնպես որ նրանք, ովքեր ուզում են այստեղից գնալ ձեզ մոտ, չեն կարող, և չեն կարող այնտեղից գնալ մեզ մոտ:

Եզրակացություն

Առակների ուսուցողական արժեքն անվիճելի է, քանզի այն , ինչ ուզում ենք հասկանալի ու իրագործելի դարձնել երեխայի համար, կարող ենք իրականացնել հենց առակում առկա բարոյախոսության միջոցով:

Երեխան հասկանում է, որ առակի հերոս կենդանիները, բնության երևույթները կերպարանափոխված մարդիկ են։ Շատ ավելի դյուրըմբռնելի ու պարզ է դառնում առակի հիմնական մտքի վերհանումը աշակերտների կողմից, եթե աշխատանքը զուգորդվում է առակի թեմային վերաբերող առածների, ասացվածքների կիրառմամբ։

Այսպիսով, առակների դասավանդումը դպրոցում երբեք չի կորցնում իր բուն նպատակը՝ դաստիարակել բարոյական բարձր արժեքային համակարգ ունեցող սերունդ, երեխայի մոտ վերացնել բնավորության վատ գծերն ու թերությունները, ընդլայնել աշխարհաճանաչողական գիտելիքները։

Առակների միջոցով զարգանում է նաև աշակերտների ընթերցասիրությունը, կարդալու որակական հատկանիշները։ Դասագրքերում ընդգրկված հայ և այլազգի առակագիրների ստեղծագործություններն իրենց պարզ ու մատչելի գրելաոճով միշտ էլ սիրելի ու հետաքրքիր են հայ փոքրիկ ընթերցողների համար։ Ուստի, տեղին է նշել, որ ավելի լավ կլիներ մայրենիի ընթերցարաններում ընդգրկել շատ ավելի լայն և ընդգրկուն թեմատիկ շարք՝ դասական գրականության, ինչպես նաև նոր ժամանակների առակների նմուշների ներառմամբ։

Միանգամայն ընդունելի է այն կարծիքը, որ Աստվածաշնչյան առակների դաստիարակող էությունը, դերն ու նշանակությունը եղել և մնում է ողջ քրիստոնյաների հավատքի հիմքը, ինչպես Հիսուսն էր անուղղակիորեն խրատում իրեն լսող ու հետևող ժողովրդին՝ մեջբերելով առակներ։

Ահա, թե ինչու նոր սերնդին ևս պետք է առաջնորդել, ուղղորդել և բարոյապես դաստիարակել առակի բարձրարժեք և խորիմաստ նմուշներով, որոնք դեռ դարեր կպահպանեն իրենց ժամանակի թարմությունն ու դիպուկությունը, մտքի խորությունն ու լեզվի ճկունությունը։

Օգտագործած գրականության ցանկ

1. Ա. Դոլուխանյան, Հայ գրականության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2006՛

2. Ղևոնդ Ալիշան, Յաղագս իսկագիր և նախագաղափար օրինակի Գրոցն դաստաստանի Մխիթարայ Գօշի,- «Բազմավէպ», 1848, էջ 117-122։

3. Լ. Թորգոմյան, Մանկավարժության արժեբանության հիմունքներ, ՈՒսումնական ձեռնարկ, Եր.,հրատ.,2011: